Հայոց լեզվի օլիմպիադայի հանրապետական փուլի
պատասխաններ՝ 9-րդ դասարան

1. զմրուխտաշող, վիմակոփ, հյուրընկալ, երկնամուխ, որձաքար, անընստգյուտ, ողորկ, մույթ, առեղծված, միմյանց, խաբկանք, մտացածին, մանրազնին, ահագնասարսուռ, վեհապանծ

2. Ազատ գետի զմրու-տաշող ափին՝ վիմակո- հրվանդանի վրա, հառնում է Գառնո տաճարը՝ հիմնված մեր թվարկության առաջին դարում: 3

Բյուզանդական կայսր Ներոնի կողմից թագադրվելուց հետո հայոց արքան՝ Տիգրան Մեծը, շրջեց Հռոմում՝ ծանոթանալու հյուր-նկալ քաղաքի պերճ շինություններին: Զմայլված երկնամու- կառույցներով՝ արքան, աչքերը հառած անձեռակերտ տաճարներին, մտովի որոշեց. «Հայրենիք վերադառնամ՝ կկառուցեմ հար և նման բարձրասյուն շինվածք, և այն իր տեսքով կլինի նույնքան հիասքանչ ու փառահեղ, ինչպես այս տաճարը»: 12

Գառնիի՝ մոխրակապույտ որ-աքարից կառուցված կոթողը Հայաստանում միակ հեթանոսական տաճարն է, որ պահպանվել է հայերի կողմից քրիստոնեությունը ընդունելուց հետո: Ենթադրվում է՝ այն նվիրված է եղել Միհրին. նա հայոց դիցարանում արեգակի, լույսի աստվածն է: Ինքնատիպ ոճով կառուցված ան-ստգյուտ շինվածքը հիացնում է նրբին քանդակներով, վերձիգ սյունները՝ ոլորապտույտ խոյակներով, օրվա քսանչորս ժամերը խորհրդանշող ողոր- մույ-երը՝ իրենց վեհությամբ: Անփորձ աչքի համար առե-ծված է՝ ինչպես են քարերը միմ-նց ագուցվել առանց շաղախի. ասես խա-կանք է կամ մտա-ածին դյութանք, այլ ոչ թե իրական հորինվածք: Սակայն մանրազ-ին ուսումնասիրելով՝ հասկանում ես՝ միացած են երկծայր գամերով՝մխրճված արճճի մեջ:15

Տաճարը փլուզվել էր 1679 թվականի ահագնասա-սուռ երկրաշարժի հետևանքով ու հիմնովին վերականգնվեց միայն երեք հարյուր տարի հետո: Եվ այսօր նա իր վեհապան-կեցվածքով ասես մարտահրավեր է նետում դարերին:

3. **ստորադասական- 4**
Հայրենիք վերադառնամ՝ կկառուցեմ
Ենթադրվում է՝ այն
Անփորձ աչքի համար առեղծված է՝ ինչպես են
հասկանում ես՝ միացած են կամ հասկանում ես. միացած են
համադասական - 4
Միհրին. նա հայոց դիցարանում
վերձիգ սյունները՝ ոլորապտույտ խոյակներով
օրվա քսանչորս ժամերը խորհրդանշող ողորկ մույթերը՝ իրենց վեհությամբ,
առանց շաղախի. ասես խաբկանք է

4.**բնօրինակ**=<u>բն</u>(բուն)+<u>օրին</u>(օրեն)+<u>ակ</u>,
սառցաբեկոր= <u>սառ</u>(ը)+<u>ց</u>(ույց)+ա+<u>բեկ</u>+<u>որ</u>
հետնամուտք= <u>հետ</u>+ <u>ն</u>(ին) +ա+<u>մուտ</u>+<u>ք</u>,
ահագնատես= <u>ահ</u>+ա+<u>գն</u>(գին)+ա+<u>տես</u>
քառակուսի= <u>քառ</u>+ա+<u>կուս</u>(կույս)+<u>ի</u>

5.**վեհերոտ**- վախկոտ, երկչոտ **քենակալ**- կնոջ քրոջ ամուսինը,
ճամարտակել-ճոռոմաբանել,շատախոսել, շաղակրատել,
երասան- սանձ, պախուրց, պարան, առասան,
եղրևանի- յասաման, շեփորուկ, **թարփ**-ձուկ որսալու ցանց,
տարփողել- հայտարարել, ազդարարել և այլն,
լախտ- մտրակ, խարազան, գնդաձև ծայրով գավազան՝ մահակ, գուրզ,
խոչակ- շնչափողի վերին մասը, շնչափող, խոչափող, կերակրափող, կոկորդ
աչառու- կողմնակալ, անազնիվ, անարդար,անարդարադատ և այլն,

6. Խիզախ հայորդիների՝ կառավարությունից գաղտնի օտար ափերից մեծ զորավարի նշխարները հայրենիք վերադարձնելուց հետո Խուստուփը՝ Նժդեհի անձեռակերտ հուշարձանը, վերջապես ընդունեց հերոսի մասունքները:

7. **աքիլլեության գարշապար**-մարդու կամ բնագավառի թույլ, խոցելի կետ՝տեղ,
դամոկլյան սուր-մշտապես սպառնացող վտանգ, բայց ապարդյուն աշխատանք:

Գնահատման չափանիշներ - 9-րդ դասարան

Հարց 1. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,2 միավոր:
Հարց 2. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,1 միավոր:
Հարց 3. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,25 միավոր:
Հարց 4.Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,4 միավոր:
Թույլ տրված յուրաքանչյուր սխալի դեպքում տյալ բառի համար միավոր չի տրվում:
Հարց 5. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,2 միավոր:
Հարց 6. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավոր:
Կետադրական սխալի դեպքում կհանվի 0,25 միավոր:
Հարց 7. Յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավոր:

2-րդ առաջադրանքից սկսած՝ ուղղագրական յուրաքանչյուր սխալի համար հանվում է 1, կետադրականի համար 0,5 միավոր, քերականական, ոճական և տողադարձի սխալներից յուրաքանչյուրի համար՝ 0,25 միավոր: